№ 3 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 6

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 6 № 3

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 կոպ.

Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1909 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(37-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., մէկ ամսվանը՝ 1 ռուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամակագրոշմ։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիկական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խընդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ (հին բաժանորդներից խնդրվում է ուղարկել նախկին տպագրված հասցէն)։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱԶԴ

ԵՂԲ. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՆԵՐԻ ԵՒ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

(Նիկոլայեվսկի կամուրջի վրա, ՔԱՄՈՑԵՎԻ տանը № № 25—30)

Պատիւ ունի յայտնելու յարգելի գնողներին, որ, ի նկատի ունենալով Մոսկվայի իր սեփական ֆաբրիկայում պատրաստված ՄԵԾԱՔԱՆԱԿ ԱՊՐԱՆՔԸ՝ ՄՕՏ 100,000 ՐՈՒԲԼՈՒ ԱՐԺՈՂ.—տղամարդկանց, կանանց, երեխաների և բոլոր հիմարկութիւնների պաշտօնական ՊԱՏՐԱՍՏԻ ՁԳԵՍՏՆԵՐ, և նոյնպէս՝ ի նկատի ունենալով ընդհանրապէս առևտրի կանգ առնելը, ԴԼԽԱՒՈՐ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ կարգադրութեամբ

Դեկտեմբերի 1-ից նշանակված է

խանութում գտնվող բոլոր ապրանքների համար—ձմերային և ամարային սեզօնի

ՄԻՆՉԵՒ ՕՐՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ ՁԵՂԱԾ

ՄԵԾ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ

(29, 2, 7, 11, 14, 17, 21, 23, 24 դ. 4 յուն.) առ. 10—10

ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻՆ ՆՈՒԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ա. ՌԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ՀԱՏԱՎԱՃԱՌ ԽԱՆՈՒԹԸ

ՍՏԱՑԵԼ Է ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ՕՐԻԳԻՆԱԼ ՍԳՐԱՆՔՆԵՐ

(21, 24, 5) (ա.) 3—3

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1909 Թ.

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

Չորրորդ տարի

«Խաթաբալան» միակ գունատիպ պատկերազարդ հայ շաբաթաթերթն է։

«Խաթաբալան» հրատարակվում է ռուսական և եւրոպական լաւագոյն թերթերի օրինակով։

«Խաթաբալան» հրատարակվելու է 12—16 երես, որտեղ կը մտնեն բացի սովորական չորս երես կարիկատուրաներից այլև մեր և հարևանների կեանքից, դէպքերից և անձնաւորութիւնների պատկերներ, նկարներ և տեսարաններ։

Մասնակցութեամբ մեր մշտական աշխատակիցների

«Խաթաբալայի» նոր բաժանորդները թերթը ստանում են գրվելու օրից։

ԲԱԺՆԵԳԻՆԸ է

Թիֆլիս—տարեկան 4 ռ., կէս տարվանը 2 ռ. 50 կ., երեք ամսվանը 1 ռ. 25 կ.։

Ուրիշ տեղեր և արտասահման—տարեկան 5 ռ., կէս տարվանը 3 ռ., երեք ամսվանը 1 ռ. 50 կ.։

Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել՝ 1) խմբագրատանը, Московская ул., № 19 2) «Դուստեներգ» գրախանութում, Առևտրական բանկին կից. 3) Եղբ. Յակոբջանեանցների և Սարգսեանցի պատրաստի հագուստեղէնի մագազինում, Նիկոլաեվսկի կամուրջի վրա։

Հասցէն՝ Тифлисъ, редакція «Хатабала». արտասահմանից Tiflis (Caucase), Redaction «Chathabala». հեռագրի համար՝ Тифлисъ, «Хатабала».

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

ա. (ա.մ.) 15—9

ԳՆՂԱՓԱՐԻ ՈՅԺԸ

Գաղափարական է մեր գործը։ Եւ այսօր, Գաղափարի յայտնութեան օրը, մենք կրկնակի ընդգծում ենք վեհագոյն գաղափարների աբանչելի դերը և կոչումը մարդկային կեանքի մէջ։

Գաղափարներն են, որ տիրում են և թագաւորում մարդկային աշխարհում։

Գաղափարներն են, որ կարգադրում են մարդկութեան բոլոր գործերը։

Գաղափարներն են, որ ստեղծում են մտաւոր և բարոյական հոսանքներ մարդկային պատմութեան մէջ։

Գաղափարներն են, որ պայմանաւորում են մարդկային համախմբումների բռնած և բռնելիք դիրքերը իրականութեան մէջ։

Իբրև որոշ գաղափարների անձնուէր մշակներ, մենք հաւատում ենք մեր դաւանած գաղափարների բարոյական ոյժին և ստեղծագործող ոգուն։ Նրանք արել են արդէն նոյնիսկ մեր սահմանափակ իրականութեան մէջ նշանաւոր նուաճումներ և նրանց համար վերապահված են աւելի ևս ընդարձակ հօրիզոններ առաջիկայում։

Մենք գաղափարների զինուորներս և գաղափարների իրագործողներս դառն փորձերով գիտենք, թէ որքան դժուար է այն ճանապարհը, որով պէտք է անցնենք, ընթանանք, և որքան ծանր են այն բեռները, որ կուտակվում են մեր ուսերի վրա, բայց գիտենք և այն, որ իրանք գաղափարները՝ իրանց բարոյական էութեամբ կը բանան, կը հարթեն և կընդարձակեն առաջադիմութեան ճանապարհը. նրանք կուժեղացնեն մեր ուսերը և թիկունքները աւելի ևս ծանր բեռների համար և կը թեթևացնեն նախկին բեռների ճնշիչ ծանրութիւնը։

Այն կենսունակ և փրկարար գաղափարները, որոնց մենք նուիրված ենք, չեն մեռնի երբէք։ Նրանք կը գտնեն նորանոր մշակներ իրանց համար և կը յաղթանակեն լուսաճաճանչ պսակներով։

Մենք հաւատացել ենք ժողովրդական ազատ մտածողութեան գաղափարին։ Մենք հաւատացել ենք ժողովրդական ստեղծագործական ոգու լիակատար զարգացման գաղափարին։ Մենք հաւատացել ենք արդարութեան սկզբունքների յաղթանակներին։ Մենք հաւատացել ենք մեր յոյսերի, տենչանքների և իղձերի իրականացման։

Եւ այդ հաւատով ու յոյսով մենք կը գործենք առաջիկայում։

Ա. Քալանթար

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄԻ ՇՈՒՐՋԸ

Յունվարին Պետական Դումայում հանդէս է գալու Կովկասի Փոխարքայի օգնական Մլցկէվիչը, որ բացատրութիւններ կը տայ կովկասեան հարցապնդումների վերաբերութեամբ։

Օրդուբաթից Կովկասի Փոխարքայի անունով ուղարկված է հետևեալ հեռագիրը.

«Ծանօթանալով Պետական Դումայում Պուրիշկեվիչի արտասանած ճառի բովանդակութեան հետ, որ յանդգնաբար թոյլ տուեց իրան խօսել Ռուսաստանի կողմից և անամօթաբար զրպարտեց Զերդ Պայծառափայլութեանը, ձեր մերձաւոր աշխատակիցներին և Կովկասի ամբողջ ազգաբնակութեանը, Օրդուբաթ քաղաքի բնակիչները, առանց ազգի խարութեան, միացնում են իրանց բողոքը ամբողջ երկրի բողոքին, իրանց զայրոյթն ու արհամարհանքն են յայտնում զրպարտողին և սրտանց համակրանքը և խորին սէրը Զերդ Պայծառափայլութեանը, յուսալով որ պուրիշկեվիչեան ոչ մի ոտնձգութիւն յետ չի կասեցնի Զերդ Պայծառափայլութեան ընդդէմ բարենորոգումները իրագործելու ուղիից՝ յերջանկութիւն միշտ Ռուսաստանին հաւատարիմ Կովկասի ժողովուրդներին։ Այս մասին Օրդուբաթի բնակիչների խնդիրքով պատիւ ունեմ տեղեկացնել Ձերդ Պայծառափայլութեանը։ Քաղաքային աւագ Ռիզաէվ»։

ՆՈՐ ԱՂԷՏ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Նէապոլ, 2 յունվարի

Երէկ գիշեր Սիցիլիայում տեղի ունեցաւ նոր երկրաշարժ, լրացնելով առաջին երկրաշարժի աւերածութիւնները։ Նեղուցում ծովի յատակը բարձրացաւ։ Անգլին ալիքներ շպրտվեցին ափը, ողողելով և սրբելով ամեն ինչ իրանց ճանապարհին։ Հէնց այդ իսկ ժամանակ տեղի ունեցան սաստիկ փոթորիկ և անձրև։ Բանակային շինութիւնները, որոնց մէջ ժամանակաւորապէս ապաստանել էին կատաստրոֆայի զոհերը, փոթորկից տարվեցին դէպի ծով։ Գետնի վրա երևացին խոր ճեղքուածքներ։ Զոհերի թիւը մեծ է։ Ազդարարութիւնը շուարել է սարսափից։ («К.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարիզ, 2 յունվարի

Յունվարի 9-ին բաց թողնվելիք ռուսական փոխառութիւնը կազմում է 1400 միլիոն ֆրանկ։ Այդ գումարից 1220 միլիոնը ընկնում է ֆրանսիական շուկային։

Սենատ։ Դէբօսար վերստին նախագահ ընտրվեց 229 ձայնով ընդդէմ 16-ի։ («Հ. Գ.»)

Բերլին, 2 յունվարի

«Kreiz-Zeit»-ը նպաստաւոր տոնով է խօսում Ռուսաստանի պետական վարկի մասին, համարում է նրան ներերուն, նախատեսելով է, որ նա այդպէս էլ կը մնայ շատ տարիներ։ («Հ. Գ.»)

Թիֆլիս, 1 յունվարի

Կովկասի Փոխարքայի ներկայացուցիչ բարոն Նոլդէն ժամանեց Կովկաս։ («Հ. Գ.»)

«Баку» լրագրին Թիֆլիսից հեռագրում են հետևեալը։

«Վերջին ժամանակներս բոլոր ձերբակալված անձերի գործի վերաբերմամբ, որոնք մեղադրվում են «Դաշնակցութիւն» կուսակցութեանը պատկանելու մէջ, նախագծվում է հիմնել դատաստանական պալատին կից առանձին քննիչ յանձնաժողով»։

Ռուսաստանից Իտալիա ուղարկվող նուիրատուութիւնների ընդհանուր գումարը ներկայումս հասնում է 90,000 ֆրանկի։ («Б.»)

Պետերբուրգ, 2 յունվարի

Տիկին Խամեկովը Հռոմից շնորհակալական հեռագիր ստացաւ իտալական թագուհի Հեղինէից։ («Հ. Գ.»)

Պետերբուրգ, 2 յունվարի

Անտոնից միտրոպոլիտի կարգադրութեամբ թեմի բոլոր եկեղեցիներում հանդանակութիւն է բացված յօգուտ Իտալիայի զնասվածների։ («Հ. Գ.»)

Կերչ, 2 յունվարի

Մասնաւոր նախաձեռնութեամբ հանդանակութիւն բացվեց յօգուտ Սիցիլիայի զնասվածների։ («Հ. Գ.»)

Պարիզ, 2 յունվարի

Պատգամաւորների պալատում Բրիսսոնը յիշեց Իտալիայի կատաստրոֆայի մասին և միաժամանակ շեշտեց, որ բոլոր պետութիւնները համերաշխութեան ապացոյցներ տուեցին։ («Հ. Գ.»)

Լէնքօրան, 2 յունվարի

Քաղաքից հինգ վերստ հեռաւորութեան վրա ձերբակալվեցին դեկտ. 17-ին պօստային գրասենեակը կողոպտողներից երկուսը։ Երրորդ կողոպտիչը սպանված գտնվեն Գոկտալի մօտերը։ Սպանվածի և ձերբակալվածների մօտ գտնվեցին մօտ 20,000 ռուբլի։ Մի ուրիշ գործակից, որ յափշտակել էր վիրաւորվածի հրացանը և որը, ձերբակալվածների ասելով, ստացել էր 6000 ռուբլի, անյայտացաւ։ Կողոպտիչները իմէրէլներ են։ («Հ. Գ.»)

Բերլին, 2 յունվարի

Ռէյխստագը ձեռնարկեց բանւորական պալատների օրինագծի առաջին քննութեան։ («Հ. Գ.»)

Լօնդոն, 1 յունվարի

Երեկոյեան թերթերը հաղորդում են, որ Բոլգարիան Աւստրիայի հետ ունեցած գաղտնի դաշնադրութեամբ պարտաւորվում է օգնել Թիւրքիայի և Սերբիայի դէմ։ Դրա համար Աւստրիան խոստանում է Բոլգարիային Մակեդոնիան։ Անգլիան պետութիւնների հետ բանակցութիւններ է վարում այն նպատակով, որ ցոյց տայ Սերբիային միջազգային քաղաքական դրութեան հետ հաշվվելու անհրաժեշտութիւնը, այլապէս պետութիւնները կը հրաժարվեն պաշտպանել Աւստրիային վճռական միջոցների դէմ։ («Б. Э.»)

Բուդապեշտ, 2 յունվարի

«Cor. Bureau»-ին հաղորդում են Զագրէբից. «Հրատարակվեց մեղադրական ակտը սերբական գործի առիթով։ Մեղադրվում են 52 մարդ, գլխաւորապէս ուսուցիչներ, հոգևոր անձեր և մի քանի վաճառականներ, պետական դաւաճանութեան մէջ, որ ուղղված է բաժանելու Խորվատիան, Սլավոնիան և Բոսնիան և նրանց միացնելու Սերբիային։ Մեղադրեալները պրոպագանդայի նպատակով կազմակերպեցին միութիւններ, որոնց հայթայթեցին ռազմամթերքներ։ Պրոպագանդան պէտք է տարածվէր և զօրքի մէջ, որով մարդութիւն կար ներշնչել զինուորներին պատերազմի դէպքում չը կրակել սերբերի վրա։ Միութիւնները կապ ունէին «Սլաւոնական Հարաւ» բոլգարական դաշնակցութեան հետ, որի շնորհիւ յարաբերութիւն հաստատվեց բոլգարական պալատի հետ և մի քանի օֆիցէրներ ուղարկվեցին Խորվատիա և Բոսնիա։ («Հ. Գ.»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 2 յունվարի

Նաւահանգստի մուտքի մօտ պայթում եղաւ այն րոպէին, երբ բանւորները աշխատում էին ուժանակի փամփուշտներով պայթեցնել խորտակված նաւի կտորները։ Հինգ հոգի ոչնչացվեցին, երեքը վիրաւորվեցին։ («Հ. Գ.»)

Կատարվեցին խուզարկութիւններ ծայրայեղ ձախակողմեան լրագիրների խմբագրատներում և բազմաթիւ ձերբակալութիւններ։ Բռնված է շատ զէնք։

«Իդդիֆագի» կոմիտէում յաղթանակը տարաւ խաղաղարար-ազատամիտ ուղղութիւնը։

Լօնդոն, 2 յունվարի

«Daily Chronicle» լրագրին Վաշինգտոնից հաղորդում են. «Ծովային վարչութիւնը թիւրքաց կառավարութեան խնդիրքով թոյլատրեց ծովային թիւրք տասը օֆիցէրների, ի թիւս որոնց և սուլթանի որդուն, գնալ Միացեալ-Նահանգները ծովային գործի ուսումնասիրութեան նպատակով ամերիկական էսկադրայի հետ, որ գտնվում է Միջերկրական ծովում։ («Հ. Գ.»)

Բերլին, 2 յունվարի

«Köl. Zeit.»-ը գրում է, որ Աւստրո-Ունգարիայի հետ համաձայնութիւն կապելը հանդիսանում է Թիւրքիայի դիպլոմատիական աջողութիւն։

Վիէննա, 2 յունվարի

«Cor. Bureau»-ին հաղորդում են Կ. Պոլսից. «Պալավիչինին խօսակցեց Քեամիլ-փաշայի և Թէվֆիկ-փաշայի հետ

աւստրօ թիւրքական համաձայնութեան կէտերը ձեւակերպելու մասին։ Պալավիչինին նորից առաջադրութիւն արեց Բ. Դրան առաջ աւստրիական նաւերը դատարկելու վերաբերութեամբ։ Բ. Դուռը խոստացաւ ձեռք առնել համապատասխան միջոցներ, որպիսի խոստումը յոյս է տալիս, որ բոյկոտը շուտով վերջանայ։ («Հ. Գ.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

—

Թէհրան, 1 յունվարի

Ինչպէս հաղորդում են, շահը բանակցութիւններ է մղում Գերմանիայի հետ՝ ուղարկելու Պարսկաստան 15 սպայ և 30 ունտեր-օֆիցէր պարսկական զօրաբանակի վերակազմութեան համար։ («Б.»)

—

Ղօչան, 26 դեկտեմբերի

Դիւլիմգար գիւղում (Դէրբէկէզի շրջան) կառավարութեան դէմ ապստամբվածներին ջլատելու համար, դեկտեմբերի 12-ին տեղիս դատաւորի ճանապարհած 40 ձիաւորներից նախ անցեալ օրը լուր բերին, որ ընդհարվել են սահմանադրականների հետ և պարտվելով փախուստի են դիմել։ Այդ լուրը դատաւորին հասնելուն պէս այսօր նորից ճանապարհում է իր Մէշէդից յետ վերադարձած 60 ձիաւորներին, որոնք Մէշէդի գեներալ-նահանգապետի պահանջմամբ սրանից մէկ ամիս առաջ Մէշէդ էին գնացել այնտեղի ապստամբվածներին զսպելու։ Ինչպէս տեղեկացանք, տեղիս ձիաւորներից դեռ 100 հոգի մնացել են Մէշէդ, որոնք մինչև մարտ պիտի մնան։

Այսօր 24-ին Մէշէդի գեներալ-նահանգապետ Բօքնօթէդ-Դովլէի հրամանով ճանապարհված Թէյմուրի 30 ձիաւորներն տեղս հասան, որոնք այսօր կամ վաղը նոյնպէս կը ճանապարհվեն Դէրէգէզ։

Զը նայած Դէրէգէզից 140—150 վերստ հեռաւորութեան վրա ենք գտնվում, բայց և այնպէս մինչև այժմս էլ դէպքի մասին ոչ մի ճշգրիտ տեղեկութիւն չունենք, շարունակ հակասող լուրեր ենք ստանում։ Ոմանց ասելով յեղափոխականները 2 թնդանօթ ունեն, 800 կազմ և պատրաստ ձիաւոր, նոյնչափ էլ հետիոտ։ Յեղափոխականների այդ պարագլուխ սէիդը, որի մասին նախընթաց նամակով գրել էի, տեղացի պարսիկներից չէ, այլ Ատրպատականի կողմերից է և, ինչպէս պատմում են, Ռուսաստանից, որ սահմանին շատ մօտ է, շարունակ մեծ քանակութեամբ փող է ստանում։ Այնպէս որ իր ձիաւորներին 15, իսկ հետիոտներին 8 թուման, թումանը մօտաւորապէս 1 ր. 80 կոպէկ, ամսական ռոճիկ է նշանակել։ Թէ որչափ այս լուրերը ճիշտ են, կարող են ստուգութեան։ Մօտիկ ապագայում կը պարզվի ամեն ինչ։

Էշիբէկ

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 23 դեկտեմբեր

Իտալիոյ երկրաշարժին ցնցումները, հոսալ, ցնցումներու ահիթ եղան սիրտերու մէջ։ Սուլթանը, երևի խորապէս յուզուած, անմիջապէս իր գթութեան գանձէն 1000 ոսկի ճամբայ հանեց դէպի Իտալիա և մօտ օրէն ճամբայ պիտի հանէ իր մէկ զբաղաւորը առատ ուտեստներով՝ կարօտեալներուն, արկածեալներուն բաշխելու համար։

Թիւրք մամուլն ալ, վեհապետին այս օրինակէն խրախուսուած, կոչում կընէ սրտաշարժ ոճով իսլամներուն՝ հասնիլ մարդասիրական նպատակներով։ Թերթի մը վարիչներէն մին, նպաստի ճամբայ մը բանալու համար, մէջտեղը կը դնէ իր գրպանէն 500 ֆր. սրտաշարժ ոճով։

Ու երկիրը, սուլթանը առաջնորդ ունենալով, կը քալէ վեհանձնաբար դէպի մարդասիրութիւն, դէպի համամարդկային ձգտումներ, դէպի բարձրագոյն քաղաքակրութեան շնորհներ։

Այս խլրտումները իսլամ ոգիներու դէպի բարեսրտութիւն՝ կը յիշեցնեն հելլէն փիլիսոփայի մը դէպի Սիկիլիա ճամբորդութիւնը։

— Ո՞ւր կերթաս, — կը հարցնեն իրեն։

— Սիկիլիա։

— Ինչո՞ւ արդեօք։

— Կապար ուտելու համար։

— Յունաստանի մէջ մթթէ կապար կը պակսի։

— Միտքս այդպէս դրած եմ։

Ճիշտ ատոր պէս է հիմա մեր վեհափառ կայսեր գթութեան գործն ու մարդասիրական քարոզը թիւրք մամուլին մէջ։

Սահմանադրութեան հռչակումէն ի վեր է, որ հայ կարօտեալներու, սովի սպառնալիքը մէջտեղը եկած է. խեղճ ժողովուրդ մը թիւրք բռնապետութեան երեսէն ջարդուփշուր եղած, հարստահարուած, կողոպտուած, թալանուած, սնանկութեան մղուած ամեն դժոխային հնարքներով, խեղճ ժողովուրդ մը հերոսական ճիգեր կընէ նպաստելու իր սովեալներուն, իր գաղթականներուն, այսօր ալ, ձիւն-ձմեռ ատեն, սովամահներու տխուր գոյժը կը հասնի մինչև կայսերանիստ քաղաքը, ազգը ճղիկ-ճղիկ կուգայ, և սակայն սուլթանական գթութիւնը չհաճեցաւ տակաւին Եըլդզի պալատէն քիչ մը վար նայիլ տեսնելու համար թէ ինչ օրհասական ճիգեր են, որ կը թափուին իր ոտքերուն տակը՝ մահուան ճապաւուններէն խլելու ժողովուրդ մը, իր հոգին վրայ, իր կայսրութեանը մէջ, ժողովուրդ մը, որուն ձեռքն ու ոտքը ջախջախեց և հուսկ ուրեմն, սուրերէ զերծ մնացածները, այսօր ալ սովին ճանկերուն տակ կը նետէ գիշատուելու համար։

Նոյնը պիտի ըսենք մամուլին համար։ Իր գթոտ նախադասութիւնները դէպի Եռնայի աւերումները ուղղելու փոխարէն, ինչո՞ւ համար, ցայսօր, տող մը բան իսկ չհաճեցաւ գրելու այն կարօտ, չքացած, փճացած ժողովուրդին համար, որու հետ եղբայրակցութիւն ուխտեց գրկատն համբոյրներով։ Ու ասիկա այն ատեն, երբ հայերը, իրենց նեղութեան օրերու մէջ, հասած էին իսլամ հրկիզեալներուն, Էնվէրբէյի ձեռքով բացուած հանգանակութեանը։

Ի՞նչ ընեն հայերը. հօթը ամիս է, որ բոլոր քսակները դատարկուեցան ու կը քամուին այսօր ալ։ հայասէրներ հասան ամեն կողմէ, ամեն տեղէ տուողները տուին, կուտան և պիտի տան. սակայն ուրկէ. հաւատացէք որ ալ ոյժ չմնաց ազգին մէջ, մինչդեռ, ընդհակառակն ըլլալով, օրէ օր, շաբաթէ շաբաթ, նոր ձայներ կը լսուին օգնութիւն հասնելու համար։

Պէտք է գիտնալ որ Պօլսի ունևոր դասակարգը չունի իր նախկին վիճակը։ կորստած է հին հարստութիւնը։ հին ըէժիմը զարկած է այդ ոյժն ալ, ու զարկած ամենէն զարշելի միջոցներով։

Մեր թերթերը գրեցին այս նիւթին վրայ, ու երկու օր է որ կը շարունակուին ծանր դիտողութիւններ։

Օրմանեանը կը շարունակէ յաջողական նամակներով ջանալ զբաղեցնելու ազգային երեսփոխանութիւնը։ Ժողովը յանձնախումբ մը կազմեց՝ քննելու կծու ամբաստանագիր մը, որ մատուցուած էր դիւանին։

Օրմանեան իրաւունք ունի իր մասին եղած ամբաստանութեան մէջ խառնել իրեն գործակից վարչութեան անդամները։ Տեսնենք ինչպէս պիտի լսենք արդեօք, ինչպէս զուսաւ ասելու և գլխարկը վերցնելով դուրս եկաւ փողոց։

— Տէր Աստուած, սա կեանք չէ, որ տուել ես մեզ, սա դժոխք է. մթթէ մեր կրած այսքան տանջանքները բաւ չեն. մթթէ դեռ չը քաւեցինք մեր մեղքերը։ Եւ ի՞նչ մեղք ենք գործել. եթէ մեղք է մեր ապրելը, ինչո՞ւ ստեղծեցիր մեզ։ Եթէ կեանքը մեղք է, ինչո՞ւ Քո Որդին՝ Յիսուսը ծնվեց, և մենք էլ պէտք է ծնենք Նրա Ծնունդը, հրեշտակների հետ միասին այս երեկոյ աւետիս պէտք է տանք աշխարհին։

Այսպիսի խոհերով և յոյզերով Ծերունի Մարտիրոսը, Մուշի գաւառի Ն. մեծ հայրենակ գիւղի ռէսը, դիմեց դէպի եկեղեցու բակը, ուր գիւղի ծերունիները հաւաքված իրանց դարդերն էին պատմում իրար։

Կոչնակը դեռ չէր խփել ճրագալոյցի ժամասացութեան համար։

Եղանակը թէև ցուրտ էր, ձիւնը թէև պատել էր ամբողջ գիւղը, բայց ձմերային անզօր արեգակի ճառագայթները պպզալով տանիքների և պատերի վրա՝ ոսկեզօծել էին շրջապատը։ Մի քանի երդիկներից ծուխ էր բարձրանում քուլա-քուլա և, անօսրանալով, անհետանում տարածութեան մէջ։

Ի տես ռէսի, գիւղացիները ոտքի կանգնեցին և ակնածութեամբ գլուխ տուեցին։ Այն մեծ վիշտը, որ կրում էր 3 տարուց ի վեր ծերունին, խոր կարեկցութիւն էր գործել ամենքի սրտի մէջ դէպի նրան։

Ռէս Աբրահամը հարուստ և շէն օջախի տէր մարդ էր, բայց նա և հայր էր հասարակաց, իսկ նրա կինը, պառաւ Թագուհին, գիւղի բոլոր որբերի, անանկների, թշուառների հոգատար, խնամատար մայրն էր։ Բայց նրա թագ ու պարծանքը իր հարբստութիւնը չէր և ճոխութիւնը, և երբ այդ հարստութիւնը, իր անբաւ դովլաթը յափշտակվեց թիւրք կառավարութեան կեղեքիչ պաշտօնեաների և քիւրդերի ձեռքով, նա շատ էլ չը տրտմեց, որովհետև Աստուած նրան պարգևել էր մի ուրիշ հարստութիւն, մի մեծ գանձ, որ նրա իսկական թագ ու պարծանքն էր. դա իր զեղեցիկ, մատաղ, քաջ որդին էր, Ռուբէնը, որ պէտք է վառ և շէն պահէր, յաւերժացնէր նրա օջախը։ Բայց երեք տարի առաջ նրա օջախը բոլորովին հանգաւ, երբ Ռուբէնը ձերբակալվեց և Մուշի խաւարաշէն բանտը նետվեց, մեղադրվելով իբրև յեղափոխական, որովհետև նա սպանել էր զապթիա, որ կամեցել էր առևանգել մի խեղճ գիւղացու աղջիկ, որի չքնաղ գեղեցկութիւնը գերել, հմայել էր Ռուբէնի սիրտն ու սիրտը։

Երեք տարվայ ընթացքում ոչ Մարտիրոսը իր ամբողջ կարողութիւնը ծախսեց որդուն բանտից ազատելու համար, բայց ճար չեղաւ. թիւրք պաշտօնեաները ծծեցին նրա հարստութիւնը մինչև վերջին կաթիլը, այն էլ շատ համարելով, որ «շուն գեավուրին» կախաղան չեն բարձրացնում։ Ռէսը կարողացաւ գոնէ այն արդիւնքը ձեռք բերել, որ Ռուբէնին 99 տարվայ բանտարկութեան դատապարտեցին։

Եւ մարդկային ամեն յոյս կտրած, յուսահատված և երկնային արդարութեան ու գթութեան վրա, հոգին դառնացած, սիրտը՝ մորմոքից խոռված, նա սառն դժանութեամբ կրում էր իր ծով վիշտը, տեսնելով մի ուրիշ, աւելի մեծ, աւելի խորթող դպիրները և փարիսեցիները որոնեն Աւետարանի մէջ խօսքեր, որպէս թէ արդարացնող մահվան պատիժը. աշխատաւոր և տանջվող մարդկութեան հոծ բազմութիւնը գիտէ, որ Որդին Մարդոյ սիրոյ և ներողութեան իր քարոզի համար այն ժամանակվայ դպիրների և փարիսեցիների պահանջով ենթարկվեց այն ժամանակվայ ամենախայտառակ մահապատժին—խաչելութեան՝ երկու աւազակների մէջ տեղ։

Մարդ-Աստծու այդ խաչելութիւնը ընդ միշտ ջնջեց մահապատժի բարոյական արդարացման հնարաւորութիւնը և վերջ ի վերջոյ կը ջնջէ նաև մահապատժի հնարաւորութիւնը։

Թող փարիսեցիները և դպիրները ցեխի մէջ կոխոտեն և արհամարհանքի վէմերով քարկոծեն «անկեալ կնոջ», բայց նրանք ջնջել չեն կարող ժողովրդական հոգուց Քրիստոսի պատուէրը, որ հրաւիրեց նրան, ով իրան անմեղ է զգում, առաջինը քար ձգել անառակի վրա, և ապա արձակեց անառակ կնոջ խաղաղութեամբ։ «Քրիստոս և մեղաւոր կինը», մարմնացած այնքան գեղարուեստական արտադրութիւնների մէջ, ամեն դատողութիւններից աւելի ուժեղ են արտայայտում տղամարդու երկերեսանի «սեռական բարոյականութիւնը», որ արհամարհում է իր անբարոյականացրած կնոջ։

Թող դպիրները և փարիսեցիները հնարեն թէօրիաներ յաւիտենականութեան և մարդկանց, հարուստների ու աղքատների, տիրողների և հնազանդողների, պարապների և աշխատողների բաժանման անհրաժեշտութեան մասին. միևնոյնն է, նրանք այժմ չեն կարող ջնջել և «իրանց կերպի հաստատել» Քրիստոսի խօսքերը հարուստ պատանուն, նրանք չեն փոխի այն փաստը, որ Մարդոյ-Որդուն «գլուխը դնելու տեղ չունէր»։

Նրանք չեն կարող ջնջել Աւետարանից «ամենապարզ» և իր սիմվոլիկայով ամենավեհ այն հրաշքը, երբ 5000 հոգի կշտացաւ 5 հացով։

Սով էր, կարիք կար, որքան որ ժողովուրդը բաժանված էր, որքան որ նա իրան չէր զգում միացեալ ամբողջութիւն։ Բայց ահա, Քրիստոսի քարոզութեան ազդեցութեան ներքոյ, նրա մէջ զարթնեց եղբայրական միութեան զգացումը. ամեն մէկը սկսեց եղբայրօրէն բաժանել իր ունեցած պաշարը, և կարիքն անհետացաւ, և պաշարները բաւական եղան յագեցնելու իւրաքանչիւրին և ամենքին։

Եւ կը դայ մի օր, երբ սիրոյ և միութեան աւետարանական զգացմունքով կը բռնկվին բոլոր մարդիկ, և այն ժամանակ կանհետանան բռնութիւնները, մահապատիժները, կանհետանան սրտերը և ոճիրները, կանհետանան սովը և կարիքը։

Արդեօք ժամանակ է այդ մասին խօսել, երբ անգթութիւնը հասել է հրէշաւոր չափերի։

Եւ սակայն տատանման մի բոպէից յետոյ, աւետարանական ճշմարտութեան յաղթանակի մասին ունեցած վստահութեան ջնջման բոպէից յետոյ, մենք նորից պնդում ենք.—այո, ժամանակ է, ժամանակ է խօսել բանականութեան, ազատութեան, սիրոյ ապագայ յաղթանակի մասին, որովհետև անդթութեան սանդարամեռները վկայում են ոչ թէ բռնաւորների իրանց ոյժերի մասին ունեցած վստահութեան, այլ, ընդհակառակը, նրանց սարսափի մասին։ Դա զարհուրողների անդթութիւնն է։

Արդեօք չէ՞ հնչում նրանց ականջին «Ցեառն եղբայր» Յակոբ առաքեալի խօսքերը.

«Լսեցէք դուք, հարուստներ, լացէք և ողբացէք ձեր մէջ գտնված չարիքների համար»։

—

ների հոգատար, խնամատար մայրն էր։ Բայց նրա թագ ու պարծանքը իր հարբստութիւնը չէր և ճոխութիւնը, և երբ այդ հարստութիւնը, իր անբաւ դովլաթը յափշտակվեց թիւրք կառավարութեան կեղեքիչ պաշտօնեաների և քիւրդերի ձեռքով, նա շատ էլ չը տրտմեց, որովհետև Աստուած նրան պարգևել էր մի ուրիշ հարստութիւն, մի մեծ գանձ, որ նրա իսկական թագ ու պարծանքն էր. դա իր զեղեցիկ, մատաղ, քաջ որդին էր, Ռուբէնը, որ պէտք է վառ և շէն պահէր, յաւերժացնէր նրա օջախը։ Բայց երեք տարի առաջ նրա օջախը բոլորովին հանգաւ, երբ Ռուբէնը ձերբակալվեց և Մուշի խաւարաշէն բանտը նետվեց, մեղադրվելով իբրև յեղափոխական, որովհետև նա սպանել էր զապթիա, որ կամեցել էր առևանգել մի խեղճ գիւղացու աղջիկ, որի չքնաղ գեղեցկութիւնը գերել, հմայել էր Ռուբէնի սիտքն ու սիրտը։

Երեք տարվայ ընթացքում ոչ Մարտիրոսը իր ամբողջ կարողութիւնը ծախսեց որդուն բանտից ազատելու համար, բայց ճար չեղաւ. թիւրք պաշտօնեաները ծծեցին նրա հարստութիւնը մինչև վերջին կաթիլը, այն էլ շատ համարելով, որ «շուն գեավուրին» կախաղան չեն բարձրացնում։ Ռէսը կարողացաւ գոնէ այն արդիւնքը ձեռք բերել, որ Ռուբէնին 99 տարվայ բանտարկութեան դատապարտեցին։

Եւ մարդկային ամեն յոյս կտրած, յուսահատված և երկնային արդարութեան ու գթութեան վրա, հոգին դառնացած, սիրտը՝ մորմոքից խոռված, նա սառն դժանութեամբ կրում էր իր ծով վիշտը, տեսնելով մի ուրիշ, աւելի մեծ, աւելի խորթող դպիրները և փարիսեցիները որոնեն Աւետարանի մէջ խօսքեր, որպէս թէ արդարացնող մահվան պատիժը. աշխատաւոր և տանջվող մարդկութեան հոծ բազմութիւնը գիտէ, որ Որդին Մարդոյ սիրոյ և ներողութեան իր քարոզի համար այն ժամանակվայ դպիրների և փարիսեցիների պահանջով ենթարկվեց այն ժամանակվայ ամենախայտառակ մահապատժին—խաչելութեան՝ երկու աւազակների մէջ տեղ։

Մարդ-Աստծու այդ խաչելութիւնը ընդ միշտ ջնջեց մահապատժի բարոյական արդարացման հնարաւորութիւնը և վերջ ի վերջոյ կը ջնջէ նաև մահապատժի հնարաւորութիւնը։

Թող փարիսեցիները և դպիրները ցեխի մէջ կոխոտեն և արհամարհանքի վէմերով քարկոծեն «անկեալ կնոջ», բայց նրանք ջնջել չեն կարող ժողովրդական հոգուց Քրիստոսի պատուէրը, որ հրաւիրեց նրան, ով իրան անմեղ է զգում, առաջինը քար ձգել անառակի վրա, և ապա արձակեց անառակ կնոջ խաղաղութեամբ։ «Քրիստոս և մեղաւոր կինը», մարմնացած այնքան գեղարուեստական արտադրութիւնների մէջ, ամեն դատողութիւններից աւելի ուժեղ են արտայայտում տղամարդու երկերեսանի «սեռական բարոյականութիւնը», որ արհամարհում է իր անբարոյականացրած կնոջ։

Թող դպիրները և փարիսեցիները հնարեն թէօրիաներ յաւիտենականութեան և մարդկանց, հարուստների ու աղքատների, տիրողների և հնազանդողների, պարապների և աշխատողների բաժանման անհրաժեշտութեան մասին. միևնոյնն է, նրանք այժմ չեն կարող ջնջել և «իրանց կերպի հաստատել» Քրիստոսի խօսքերը հարուստ պատանուն, նրանք չեն փոխի այն փաստը, որ Մարդոյ-Որդուն «գլուխը դնելու տեղ չունէր»։

Նրանք չեն կարող ջնջել Աւետարանից «ամենապարզ» և իր սիմվոլիկայով ամենավեհ այն հրաշքը, երբ 5000 հոգի կշտացաւ 5 հացով։

Սով էր, կարիք կար, որքան որ ժողովուրդը բաժանված էր, որքան որ նա իրան չէր զգում միացեալ ամբողջութիւն։ Բայց ահա, Քրիստոսի քարոզութեան ազդեցութեան ներքոյ, նրա մէջ զարթնեց եղբայրական միութեան զգացումը. ամեն մէկը սկսեց եղբայրօրէն բաժանել իր ունեցած պաշարը, և կարիքն անհետացաւ, և պաշարները բաւական եղան յագեցնելու իւրաքանչիւրին և ամենքին։

Եւ կը դայ մի օր, երբ սիրոյ և միութեան աւետարանական զգացմունքով կը բռնկվին բոլոր մարդիկ, և այն ժամանակ կանհետանան բռնութիւնները, մահապատիժները, կանհետանան սրտերը և ոճիրները, կանհետանան սովը և կարիքը։

Արդեօք ժամանակ է այդ մասին խօսել, երբ անգթութիւնը հասել է հրէշաւոր չափերի։

Եւ սակայն տատանման մի բոպէից յետոյ, աւետարանական ճշմարտութեան յաղթանակի մասին ունեցած վստահութեան ջնջման բոպէից յետոյ, մենք նորից պնդում ենք.—այո, ժամանակ է, ժամանակ է խօսել բանականութեան, ազատութեան, սիրոյ ապագայ յաղթանակի մասին, որովհետև անդթութեան սանդարամեռները վկայում են ոչ թէ բռնաւորների իրանց ոյժերի մասին ունեցած վստահութեան, այլ, ընդհակառակը, նրանց սարսափի մասին։ Դա զարհուրողների անդթութիւնն է։

Արդեօք չէ՞ հնչում նրանց ականջին «Ցեառն եղբայր» Յակոբ առաքեալի խօսքերը.

«Լսեցէք դուք, հարուստներ, լացէք և ողբացէք ձեր մէջ գտնված չարիքների համար»։

—

ծով-վիշտ, իր կնոջ մայրական վիշտը, որի առաջ իր հայրական, առնական վիշտը ոչինչ էր։

— Ինչ ես դարձեալ մտածում, ռէս Մարտիրոս,—հարցրեց նրան ծերունի քահանան, որ միւս ծերունիների հետ ձեռքերը տաքացնում էր եկեղեցու բակում վառած խարոյկի վրա։

— Այն եմ մտածում, տէր հայր, որ սուտ է, աշխարհումս չը կայ արդարութիւն, և մեզ համար երբէք վառ կեանք, բաղդաւոր կեանք, գոնէ մի օր, մի ժամ չէ լինելու։ Մեզ համար այլ ևս Յիսուսը չէ ծնվելու և դեռ չէ էլ ծնվել։

— Դու սխալ ես, ռէս, և մեղանչում ես. այդ երջանիկ կեանքը կը գայ մի օր, բայց դու չես տեսնի, որովհետև դու չունես այն, ինչ որ հարկաւոր է տեսնելու համար։

— Ինչ է հարկաւոր, որ ես չունեմ։

— Կենդանի հաւատ. հաւատա և կեցցես։ Եթէ հաւատ ունենաս, այս սարը կարող ես շարժել։ Հաւատը հրաշքներ կը գործէ։ Մտիր եկեղեցի, աղօթիր կենդանի հաւատով և գուցէ մեզ համար ևս վաղը Աստուածորդու յայտնութիւնը լինի և կատարվի մեծ հրաշք։

***

Եւ, արդարև, կատարվեց մի մեծ հրաշք, մի անակնկալ հրաշք։

Ռէս Մարտիրոսը, մտնելով եկեղեցի, ուր աղոտ պլպլում էին պատկերների առաջ մի քանի մոմեր, ծունկ չոքեց սառն սալաքարերի վրա և ջերմագին աղօթեց, աղեխարշ արտասուք թափելով։ Ցանկարծ նա զգաց, որ կարծես լոյսի մի նշոյլ, մի ճառագայթ թափանցեց նրա հոգու խորքը և մի ձայն շշնջաց նրան. «Տես, ահա Ռուբէնը, ազատ, ուրախ, զուարթ»։

Եւ, ով զարմանք, ծերունին հեռուն՝ սեղանի վրա նշմարեց Ռուբէնին, որ ժպտում էր. նա նոյնիսկ լսեց, այո, լսեց այս քաղցր խօսքերը. «Հայրիկ, ասա մայրիկին, որ այս երեկոյ թաթախման կը գամ»։

Զը կարողանալով զսպել իր ուրախութիւնը, նա շտապով դուրս եկաւ եկեղեցուց, որ վազէ տուն և կնոջը մեծ աւետիս տայ։ Փողոցի ցուրտ օդը ուշքի բերեց նրան, և նա ըմբռնեց նորից դառն իրականութիւնը։ Բայց ներշնչված յոյսը այնքան մեծ և զօրեղ էր, որ նա հեալով վազեց տուն և այստեղ հանդիպեց մի նոր հրաշքի։ Պառաւ Թագուհին մեծ զարմանքի և իրարանցումի մէջ էր. նա վառել էր օդայի մեծ օջախը, շարել կաթսաները, մի քանի հարևան կանայք տաշտակների մէջ խմոր էին հունցում, և օդայի մէջ մեծ եռանդ և կենդանութիւն էր տիրում։ Հէնց որ ռէս Մարտիրոսը մտաւ, Թագուհին ուրախ-ուրախ կանչեց.

— Դիտես, ռէս, Ռուբէնս այս երեկոյ գալու է։

— Ո՞վ ասաց քեզ։

— Ոչ ոք, բայց նա ինքն ասաց։

— Ո՞վ, Ռուբէնը։

— Այո, Ռուբէնս, իմ անման բալա։ Տես, ինչպէս եղաւ։ Քո գնալուց յետոյ, լացից քունս տարաւ, և ես նրան տեսայ երազիս մէջ։ Նա ծիծաղում էր. եկաւ, փաթաթվեց ինձ և ասաց. «Քաղցրիկ մայրիկ, էլ մի տրտմիր, մի լացիր. ես ազատ եմ, ամենքս ազատ ենք այստեղից. ես կը գամ այս երեկոյ՝ միասին կը թաթախվենք»։ Եւ ես գիտեմ, որ նա կը գայ, անվատաճառ կը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵՆԴԱՆԻ ՀԱՒԱՏ

(Օննդեան վէպիկ)

—

ՅԱՅՐԻԱՅԻ

—

— Այ պառաւ, բաւական է լաց ու կոծ անես. մի մտածիր է. այսօր Թաթախման օր է, ճրագալոյց է. մենք էլ քրիստոնեայ ենք, հայ քրիստոնեայ ենք, մեզ համար էլ վաղը Ծնունդ է և Ջրօրհնէք. տուն-տեղ արա, օջախը սարքիր, վառիր, Աստուած ողորմած է, չի թողնի, որ մեր շէն, վառ օջախը հանգչի։

— Ինձ համար ոչ թաթախումն է, ոչ ճրագալոյց, այ մարդ. ինձ համար ահա 3 տարի Քրիստոս չէ ծնում. ում համար օջախ վառեմ, տուն տեղ սարքեմ. իմ օջախը ահա 3 տարի է՝ հանգել է. 3 տարի է, որ ես չեմ թաթախվում։ Եւ մթթէ իմ կոկորդից պատառ կարող է գնալ, երբ իմ աչքի լոյսը, իմ աննման մինուճար զաւակը հեծում, տանջվում է բանտում, երբ նա այնտեղ ուտելու հաց չունի, երբ գուցէ անօթութիւնից մեռնում է, երբ իր մօրն է կանչում, իսկ մայրը այստեղ նստած իր գլուխն է ողբում։

Եւ պառաւ Թագուհին նորից սկսեց հեկկալ երեխայի նման, նորից սկսեց իր ողբով թնդացնել գիւղական մեծ օդայի կամարները։

Ծերունի Մարտիրոսը այլևս խօսք չը գտաւ ասելու և գլխարկը վերցնելով դուրս եկաւ փողոց։

— Տէր Աստուած, սա կեանք չէ, որ տուել ես մեզ, սա դժոխք է. մթթէ մեր կրած այսքան տանջանքները բաւ չեն. մթթէ դեռ չը քաւեցինք մեր մեղքերը։ Եւ ի՞նչ մեղք ենք գործել. եթէ մեղք է մեր ապրելը, ինչո՞ւ ստեղծեցիր մեզ։ Եթէ կեանքը մեղք է, ինչո՞ւ Քո Որդին՝ Յիսուսը ծնվեց, և մենք էլ պէտք է ծնենք Նրա Ծնունդը, հրեշտակների հետ միասին այս երեկոյ աւետիս պէտք է տանք աշխարհին։

Այսպիսի խոհերով և յոյզերով ծերունի Մարտիրոսը, Մուշի գաւառի Ն. մեծ հայրենակ գիւղի ռէսը, դիմեց դէպի եկեղեցու բակը, ուր գիւղի ծերունիները հաւաքված իրանց դարդերն էին պատմում իրար։

Կոչնակը դեռ չէր խփել ճրագալոյցի ժամասացութեան համար։

Եղանակը թէև ցուրտ էր, ձիւնը թէև պատել էր ամբողջ գիւղը, բայց ձմերային անզօր արեգակի ճառագայթները պպզալով տանիքների և պատերի վրա՝ ոսկեզօծել էին շրջապատը։ Մի քանի երդիկներից ծուխ էր բարձրանում քուլա-քուլա և, անօսրանալով, անհետանում տարածութեան մէջ։

Ի տես ռէսի, գիւղացիները ոտքի կանգնեցին և ակնածութեամբ գլուխ տուեցին։ Այն մեծ վիշտը, որ կրում էր 3 տարուց ի վեր ծերունին, խոր կարեկցութիւն էր գործել ամենքի սրտի մէջ դէպի նրան։

Ռէս Աբրահամը հարուստ և շէն օջախի տէր մարդ էր, բայց նա և հայր էր հասարակաց, իսկ նրա կինը, պառաւ Թագուհին, գիւղի բոլոր որբերի, անանկների, թշուառ-

որ ուսումնական պիտոյքները մատակարարվին նոյնպէս ձրի, որ դպրոցական շէնքերը լինեն ըստ ամենայնի յարմարաւոր, որ ուսուցիչները լինեն իրանց կոչման բարձրութեան վրա և ցնծաւոր, որ կարգ ու կանոնը տիրապետի, մի խօսքով՝ պիտի մրցենք, որ աշակերտ ունենանք, պիտի մրցենք, որ աշակերտ ունենանք, պիտի ջանք ու ճիգ, գիտութիւն ու դրամ դնենք, որ բարեկարգ դպրոց ունենանք, որ և այս դպրոցների միջոցով մեր կեանքը ապահովաբար պահենք, բարելաւենք և ցեղօրէն առաջադիմենք։

Այլև խաբուսիկ միջոցները՝ ողորմութիւն, թատրոն, երեկոյթ և այլն և այլն չեն կարող պահել մեր դպրոցները։

Պէտք է լարենք մեր ոյժերը։ Մահվան և կեանքի կռիւը արդէն յայտարարված է։ Նախկին բռնութեան միջոցները պահեստ են ուղարկված, հրապարակի վրա են կուլտուրական միջոցներ։ Այն, ինչ որ բռունցքը, հալածանքը, բանտը, աքսորը, շղթան, սուրն ու մահը չը կարողացան դարերի ընթացքում ջնջել աշխարհի երեսից, կուլտուրական խաղաղ ու մեղոյշ միջոցները շատ կարճ ժամանակում կուլ կը տան իրանց մէջ ու կանչեցացնեն, եթէ անտարբեր մնանք, ինչպէս ենք։

Ի՞նչ պէտք է անենք։

Առանց այլևս ժամավաճառ լինելու պէտք է կազմակերպենք մեր թեմական մնդուկը իրական հիմունքների վրա։

Մեսրոպ ա.-ք. Մելեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

— Դերբենդ, 29 դեկտեմբերի

Անցիս 28-ի առաւօտեան ժամը 7-ին սրտի պայթիւնից իր բնակարանում յանկարծամահ եղաւ տեղացի Գրիշա Աւշարեանը։

Հանգուցեալի մայրը փոխանակ հոգեհացի, որն ընդունված է մեր քաղաքում, երկու հարիւր ռուբլի (200 ր.) նուիրեց տեղիս հայոց ծխական ուսումնարանին։

Ցանկալի էր, որ այսուհետև շատերը հետևէին այդ բարի օրինակին, որով և կը վերանայ հոգեհացի ուղեղ սովորութիւնը և թէ օգտված կը լինեն տեղական կրթական և այլ բարեգործական հիմնարկութիւններ։

Երէկ հասարակական ժողովարանի դահլիճում տեղի ունեցաւ «հայկական երեկոյթ», որը բաւական լաւ անցաւ։ Երգվեցին մի քանի քառաձայն ժողովրդական երգեր, որոնց մեծ մասը Կոմիտաս վարդապետի ներդաշնակութիւնից էր։ Երեկոյթը աւելի շուտ ընտանեկան ընաւորութիւն էր կրում, քան թէ հասարակական։ Երեկոյթը տևեց մինչև ժամը 4-ը։ հասարակութիւնը ցրվեց գոհ սրտով։

Կասպից ծովի ափին՝ մեր շրջանում գտնված ձկնորսարաններում արդէն կեանքը եռում է, պատրաստութիւններ են տեսնում առաջիկայ ձկնորսութեան համար, որը սկսվելու է մարտի 1-ից։

Մեզ մօտ այս տարի ձմեռ գոյութիւն չունի. օրերն անցնում են շատ տաք. մերթ-մերթ անձրև է գալիս, որից առաջացած ցեխը բաւականին դժուարութիւններ է պատճառում ոգզարնակութեանը։ Զենք իմանում՝ տեղիս քաղաքային վարչութիւնը ինչ է մտածում անել այդ առիթով։

Շնորհիւ ռօնների՝ քաղաքը կենդանութիւն է ստացել. վերջին շաբաթս երեկոյթներ, ներկայացումներ և պարահանդէսներ անպակաս են։

Ռուբէն Տէր-Գրիգորեան

դայ։ դէ, գնա, միրզ, անուշեղէն ճարիր բեր։

Ռէսի մաղերը փշաքաղվեցին. նա կարծեց, որ կինը խելագարվել է վշտից, մի բան, որից նա շատ վախում էր։ Նա դուրս վազեց նորից փողոց, չը կարողանալով զսպել դառն արտասուքը։

Փողոցում մեծ իրարացումն կար։ «Գալիս են, գալիս են» աղաղակներ էին թնդում. գիւղացիները՝ մեծ, փոքր, կին, աղամարդ՝ վազում էին դէպի մեծ ճանապարհը, որ տանում էր դէպի Մուշ։

— Վազիր, վազիր, ռէս,—գոռացին ամեն կողմից.—Ռուբէնը գալիս է։ Հրաշք, հրաշք է կատարվել։

— Ի՞նչ հրաշք։

— Չը գիտենք, ասում են՝ Կ. Պոլսում մեծ հրաշք է կատարվել և մեր արիւնախում սուլթանին ստիպել են ազատութիւն և սահմանադրութիւն հրատարակել. այժմ ամենքը ազատ են լինելու, ազատ կարողանալու ենք ապրել, շրջել, գործ անել։ Ասում են, որ այդ մի քանի ամիս է, ինչ կատարվել է, բայց լուրը մեզ միայն այսօր է հասնում։ Դէ, աւելի լաւ, մենք էլ այսօր, Քրիստոսի Ծննդեան հետ կը ուտենք։

Ռէս Մարտիրոսը չիմացաւ, թէ ինչպէս վազեց մինչև մեծ ճանապարհի ծայրը. նա միայն զգաց, որ երկու ձեռներ փաթաթվեցին իր վզով և «հայրիկ, հայրիկ» քաղցր ձայնը հնչեց իր ականջին. նա տեսաւ, որ իր որդի Ռուբէնը այլ ևս շղթայակապ չէ, որ զալթիաները այլ ևս առաջվայ նման խոժոռ չեն կանգնած սրերը ձեռքին, այլ ժպտում են և քաջալերական նշաններ անում, մօտենում են գիւղացիներին, նոյնիսկ համբուրվում այդ «գեավուրների» հետ։ Շուտով հնչեց և զուռնա, երգվեցին երգեր, նոյնիսկ յեղափոխական երգեր, և ոչ ոք, ոչ մի զալթիա ձայն ծպտուն չէր հանում։ Երևացին, ով սարսափ, և կարմիր դրօշակներ, որոնք ծածանում էին քամուց։ Եւ մի անգամ թափօր երգելով, ցնծալով դիմեց դէպի եկեղեցին, ուր մի զալթիա կարգաց բարձրաձայն կուսակալի հրամանը, թէ օսմանեան փադիշահը շնորհել է իր բոլոր հպատակներին սահմանադրութիւն և թէ այսուհետև թիւրը, հայ, յոյն՝ ամենքն էլ հաւասար են օրէնքի առաջ, ամենքն էլ միևնոյն իրաւունքներն ունեն, ամենքն են ազատ են, և յարեց։

«Դէ կոչենք ամենքս՝ «փադիշահիմ չօք եաշա»։

— Ոչ, ոչ, դեռ սպասեցէք,—թնդաց որոտագին Ռուբէնի ձայնը.—առաջ երգեցէք «Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ»։

Եւ հարիւրաւոր շրթունքներից երգվեց «Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ», ու երիտասարդների խումբը, դրօշակներ ձեռքին, «Այսօր ուրախ է ծննդեան աւետիս» երգելով դիմեց դէպի տունը, ուր պառաւ Թագուհին ուրախութեան ջերմ արտասուքներով արդէն գրկախառնվել էր իր որդուն, մրմնջալով. «Այսօր դու նորից աշխարհ եկար ինձ համար»։

Ծերունիները դիմեցին եկեղեցի պատարագը լսելու, և ոչոք անդադար կրկնում էր, իբրև աղօթք.

— Այո, հաւատը հրաշքներ է գործում. աւետիս։

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԳԻՒՂՈՒՄ

—

Ամեն անգամ հայկական գիւղ ոտք դնելիս ստիպված է լինում լսել գիւղացու վերին աստիճանի անմիխիթար դրութեան մասին. նա օրէ-ցօր քայքայվում և հիւծվում է. նրա յետամնացութիւնը չափազանց լայն ծաւալ ստանալով սպառնում է կտրել նրա մայր հողի հետ ունեցած կապը, և ամենուրեք շուարած գիւղականը նոյն քաղցած, նոյն տկլոր և նոյն անտանելի պայմանների մէջ իր անտեսական ճգնաժամի հոգեվարքում սպասում է երկնային մի աներևոյթ ձեռքի օգնութեան, որ նրան այդ ընկած դրութիւնից դուրս հանէ և ցոյց տայ նրան մարդավայել ապրուստի շաւիղը։

Դժբաղդաբար մեզանում երկրագործութիւնն այնքան յետ է մնացել ժամանակից կուլտուրայից, որ հայ գիւղական աշխատանքները շատ քիչ են տարբերվում անդրջրհեղեղեան ժամանակի կուլտուրայից։ Այստեղ հայ գիւղացին այլ և այլ հանգամանքների պատճառով իրան շրջապատում է չինական պարսպի հատ պատերով և առանձնանալով արտաքին աշխարհից վարում է իր ուրոյն առանձնայատուկ կեանքը, որը անշարժ կանգնած լինելով առաջադիմութեան սառուցման կէտի վրա այդպէս էլ քարանում է թէ իր կարիքներով և թէ պահանջներով. բայց բնութեան օրէնքները այնքան ուժեղ են, որ նրա անողոք հարուածներին չեն դիմանում նոյն իսկ լեռներն ու հովիտները, ուր մնաց ձեռակերտ ասիական հայկա-չինական մի պարիսպ, որը փուլ եկաւ նրա հէնց առաջին հարուածից։

Այդ հանգամանքը մարդուն ստիպում է որոնել հաստատուն յենակէտ, և ուրախալի է ասել, որ վերջին տարիներս հայ գիւղացին ցնցվում է իր դարևոր քնից և գլուխը վեր բարձրացնելով այս ու այն կողմն է ուղղում իր հայեացքը անել դրութիւնից մի ճանապարհ գտնելու։

Ցայտնի է, որ Գերմանիայի և Ֆրանսիայի գիւղերը մի քանի հարիւր տարի առաջ, երբ նոյն դրութեան մէջ էին, ինչ որ այժմ հայ գիւղը, երկրագործութեան հետ միացրին և տնայնագործական արհեստները և, չը նայելով որ նրանց գիւղական անտեսութիւնը հակառակ մերին օր-աւուր ծաղկում և բարգաւաճում է, այնուամենայնիւ նրանք մինչև օրս էլ պինդ բռնած ունեն և զուգահեռաբար առաջ են տանում տնայնագործութիւնն իր բազմազան ճիւղերով։

Եթէ աչքի առաջ ունենանք, որ գիւղացին երկրագործութիւնից ստանում է ապրուստի 60—70 %-ը, մնացած 40—30 % բացը պէտք է աշխատել լցնելու գլխաւորապէս տնայնագործական արհեստների միջոցով։

Անդրկովկասը բազմաթիւ հում նիւթեր ունի արդիւնաբերելու, և քանի որ մեզանում գործարանական արդիւնաբերութիւնը բացակայում է, շատ տեղին և նպատակայարմար է առանց բոպէ կորցնելու ազգաբնակութեան մէջ սկիզբ դնել տնային արդիւնաբերութեան զարգացման։

Այսպիսով նախ անգործ գիւղացու ժամանակը վերածվելով աշխատանքի կը լրացնէ նրա եկամուտի պակասը և միաժամանակ պարզելով տեղական արդիւնաբերութեան ինդիրը նախադուռ կը հանդիսանայ ինդուստրիայի զարգացման մեր երկրում։

Կաւի, եղջիւրային և փայտեայ իրերի մշակութիւնը աշխատանքի առագին աղբիւր կարող է տալ ազգաբնակութեանը առօրեայ կեանքում գործածվելիք անհրաժեշտ իրեղէններ և զանազան խաղալիքներ պատրաստելու գործում։

Վուշի, բամբակի և բրդի արդիւնաբերութիւնն անվիճելի է կացուցանում զարգացնել թելեր և զանազան հագուստեղէն պատրաստելու գործը։

Սակաւ արդիւնք չի տայ նոյնպէս մորթու և կաշուի մշակութիւնը, որի հում նիւթը մեր ձեռքից խլում է եւրօպացի արհեստաւորը, նրան կոկում, յղկում ու զարդարում և ապա 5 և երբեմն 10 անգամ թանգ գնով մեզ վրա ծախում։

Ի սրտէ ողջունելով Թիֆլիսի Հայ Տնայնագործական Ընկերութեան ձեռնարկը ազգաբնակութեան մէջ զանազան արհեստներ տարածելու գործում՝ ցանկանում ենք, որ նա ջուլհակութեան արհեստին անյապաղ միացնէ թելերի, կաւի, կաշուի, մորթու և եղջիւրային իրերի արդիւնաբերութեան գործը։

Մնում է սպասել, որ հասարակութեան բանիմաց մասը ընդառաջ կը գնայ Թիֆ. Հայ Տնայն. Ընկ. սկսած բարենպատակ գործին և չի խնայի հարկաւոր նիւթական օժանդակութիւն՝ այդ գործը հաստատելու ցանկալի բարձրութեան։

Սողոմոնեան

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ «Մշակի» հետևեալ համարը Զբօրհնէքի ռօնների պատճառով լոյս կը տեսնի ուրբաթ, յունվարի 9-ին։

✦ Ներկայումս Թիֆլիսում հիւր են Մոսկվայի կանանց բարձր դասընթացքների ունկնդրուհիները և դիտում են քաղաքի հնութիւնները։

✦ Յունվարի 2-ին, ուրբաթ օր, Արշակ Զօպանեան կարդաց Ֆրանսերէն լեզուով մի դասախօսութիւն, որի նիւթն էր «Սէրը և վիշտը հայ բանաստեղծութեան մէջ»։ Դասախօսը գեղեցիկ առոգանութեամբ և աջող ձևակերպութիւններով գրաւիչ դարձրեց իր զրոյցը։ Հայ աշուղների և ժողովրդական գուսանների ստեղծագործութիւնները ներկայացրեց գեղեցիկ թարգմանած օրինակներով։ Ցաւելով պէտք է յայտնենք, որ հասարակութիւն քիչ էր հաւաքված։ Դասախօսը արժանացաւ համակրական ողջոյնի և ծափահարութիւնների։

✦ Մեզ խնդրում են յայտնել, որ Կովկասի Հայոց Բար. Ընկ. Խորհուրդը ստացել է Վարվառէ Միխայլովնա Խարազովայից Նիկոլայ Միխ. Աբամելիքովի միջոցով 100 ռուբլի յօգուտ աղքատների։

✦ Կովկասեան կայսերական բժշկական ընկերութեան հերթական նիստը նշանակված է յունվարի 7-ին, ուր կը լինեն մի քանի բեմֆերատներ։ Նիստը բաց է։

✦ Բրիւսելից եկել է ինժեներ Լէբօնը՝ իբրև ներկայացուցիչ էլեքտրաքարշի ընկերութեան՝ այն մասնաժողովի նիստերին մասնակցելու համար, որ ներկայումս գործում է Նահանգապետի նախագահութեամբ էլեքտրաքարշի գործերը Թիֆլիսում կանոնաւորելու համար։

✦ Թիֆլիս քաղաքի 1909 թ. ելեմտի նախահաշիւը Նահանգական ատենում քննվելու է յունվարի երկրորդ կէսերին։ Քաղաքային վարչութիւնը կարգադրել է, որպէսզի բոլոր բաժինները իրանց հաշիները պատրաստ ներկայացնեն մինչև յունվարի 8-ը։

✦ Յունվարի 2-ից քաղաքային վարչութեան մէջ մտցրեց հաշւապահական ժամ բոլոր բաժիններում։ Սկզբում հաշւապահութիւնը առանձին բաժին էր կազմում։

✦ Ինչպէս լսել է «Зак. Об.» թերթը, Վրաստանի էկզարքի տեղապահ Գրիգորիյ եպիսկոպոսը նշանակվում է արքեպիսկոպոս Ռուսաստանում։

✦ Թիֆլիսի առաջին քաղաքային ապաստարանում անցեալ դեկտեմբեր ամսում գիշերել են 145 հոգի, որոնցից 78 հոգի ռուսներ են, հայեր՝ 36, վրացիք՝ 19, գերմանացիք՝ 4, լեհեր՝ 3, յոյներ՝ 1, ասորի՝ 1 և լատիշ՝ 1։

✦ Սղնախում տարածված է քութեշ հիւանդութիւնը։

✦ Դեկտեմբերի 4-ից «Новости Закавказья» լրագրի ծաւալը մեծացած է։

✦ Ստացանք Մ. քահ. Զատիկեանի՝ Բեսարաբիայի հայերի համար կազմած ռուսերէն լեզուով «Армянскій Календарь на 1909 г.»։ Այս օրացոյցի մէջ գտնվում են Խաչիկ Ֆօկշանեանի, որը վախճանված է 1894 թ. և կտակել է 400 դեսեատին հող բարեգործական նպատակով, և բանաստեղծ Սմբատ Շահազիզի նկարները։

✦ «Вѣстникъ Баку» և «Бакинское Эхо» լրագիրները միութիւն կազմելով, դադարել են հրատարակվելուց, և յունվ. 1-ից այդ երկուսի փոխարէն լոյս է տեսնում «Баку» թերթը Խր. Վէրմիշեանի և Խր. Սարգսեանի ընդհանուր խմբագրութեամբ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 2 յունվարի

Շնորհաւորում ենք յարգելի խմբագրութեանդ «Նոր-Տարին» և բարեմաղթում աւելի ևս մեծ յաջթանակով թեւակոխելու 1909 տարեթիւը։

Ցիշում ենք ծանր ժամանակի օրերը, երբ «Մշակը» բաց ճակատով և կորովի անվեհերութեամբ ճղելով անցաւ իր ճանապարհը՝ խորտակելով այն խոչընդոտները, որոնք արհեստականօրէն և չարակամութեամբ յարուցանվում էին «Մշակի» դէմ զանազան մութ ոյժերի ձեռքով։ Գովում ենք ձեր այն եռանդը, երբ դուք, անվեհեր կանգնած, ասում էիք. մենք զաղափարական ոյժ ենք, մենք դարձեալ զօրութիւն ենք, թէկուզ բոլորովին մենակ մնանք։

Այո, ճիշտ այդպէս էր և հանգուցեալ Գ. Արծրունու նշանաբանը։

Եւ «Մշակը» միշտ հաւատարիմ իր գաւանանքին՝ անշեղ շարունակում է իր ուղին։

Մենք մարգարէաբար գուշակել էինք, որ յաղթանակը «Մշակի» կողմն է, և ահա այսօր շատ ուրախ ենք, երբ տեսնում ենք, որ նորից հետզհետէ խտանում են ձեր համակրողների շարքերը։

Օրէ-ցօր պարզվում է հօրիզօնը և շառագունում է արշալոյսը. պարզվում է և մթնոլորտը, և մարդիկ գիտակցութեան են գալիս։

Վերջացնելով նամակս՝

«Ցանկանում եմ ձեզ աւելի ևս եռանդ և աւիւն,

«Ուշադրութեան չառնելով ագռաւների կռաւիւն։

Ա. Բարայեան

Թիֆլիս, 1 յունվարի

Յունվարի 2-ին՝ Հաւատարի ս. Կարապետի եկ.-ծխ. դպրոցում սարքված էր մանկական երեկոյթ և տօնածառ։ Դերակատար և ոտանաւորներ ասող բ. և ա. բաժանման սանիկներն իրանց քաղցրաթօթով լեզուներով և պարզ արտասանութեամբ հոգեկան մեծ բաւականութիւն տուին ընկեր-ընկերուհիներին և ծնողներին, տպաւորիչ էին նաև պարերը տօնածառի շուրջը։

Խորին շնորհակալութեան և գովասանքի արժանի էր դպրոցի հոգաբարձուների և ուսուցիչների ինքնաբուղխ եռանդը, որոնք ամեն դժուարութիւն սիրայօժար տանելով՝ այդ տեսակի բարոյակրթիչ երեկոյթներով իրանց սանիկների անպատրաստ սրտերն են կաղապարում և աչքաբացութեան վարժեցնում։

Երեխաները վերջում ստանալով ընծաներ և թղթեայ կապոցներով միրգ՝ ուրախ-ուրախ իրանց ծնողների հետ ցրվեցին տները։

Ծնող

ԿԱՐԻՔԻ ՁԱՅՆ

—

Թիֆլիս, 2 յունվարի

Լսեցէք Գօլսոյ թերթերու շաբթուս բերած այս գործը, այս հաւարը։

Բինկեանէ հասած նամակները կը ծանուցանեն, թէ քառասուն հայ մանուկներ, ուրէն տաս տարեկան, մեռեր են անօթութենէ։ Այս ահաւոր գործին առիթով ուէ խորհրդածութեան համար մեր գրիչը կանգ կառնէ։ Մինակ հարկ է ըսել, թէ այն սերունդը, որ Հայաստանի ապագայ սերունդը պիտի կազմէ, փչանալու վրայ է...

Գօլսոյ մէջ ներկայացումներ, երեկոյթներ և ցերեկոյթներ կը տրուեն ի նպաստ սովեալներուն։

Թիֆլիսի ժողովուրդ, դու յետ չպիտի մնաս այդ գործի մէջ։

Մինչ դու քո Նոր-Տարվայ տօնածառի շուրջ, կօշինախիղ համար, երեկոյթներու և թատրոններու մէջ, Գօլովինսկի պրոսպէկտի վրայ կը թափես առատօրէն քո ռուբլիները և, շքեղօրէն հագուած, այցելութիւններ կը փոխանակես, տես քո եղբայրները Հայաստանի մէջ կը տանջուին սովէն և լսէ այն ձայները, որ օգնութիւն կաղաղակեն. անոնք հոց կը մրմնջեն, անոնք ձեզ կը նային, հայ սրտեր։

Արտաշէս Սօլաքեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՀԱՅ «ՓԱՐՈՍ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԹԱՒՐԻԶՈՒՄ

—

Վաղուց արդէն անհրաժեշտ պահանջ էր զգացվում ունենալ պարսկահայ մի կրթական ընկերութիւն, զարկ տալու համար մեր ժողովրդի տարրական, միջնակարգ և բարձրագոյն կրթութեան։

Շատ նոյնանման փորձեր են վիժել, բայց մենք յոյս ունենք, որ գոնէ այսօր վերջապէս, մեզ հետ շատերը կը հաստատեն, որ ժամ է արդէն լուրջ մտածելու և անկուն կամքով ձեռնամուխ լինելու այդ մեծ գործին։ Կրթութեան և լուրջ ինքնագիտակցութեան մէջ է կայանում մեր փրկութիւնը։

Մենք լի յոյսերով ապարէշ ենք գալիս այսօր հաւատալով հասարակութեան համակրութեան և աջակցութեան. մենք յուսով ենք, որ նա մեզ մենակ չի թողնի և նա մեզ հետ միացած կաշխատէ իրականացնել այն վեհ նպատակը, որին 3 տարուց ի վեր հետապնդել է Թիֆլիսի պարսկահայ աշակերտական մի նեղ շրջան «Փարոս» ընկերութիւն անունով, ունենալով իր համեստ գործունէութիւնը։

Հավակրողների առաջ դնելով մեր ընկերութեան նախագծից մի քանի հատուածներ, մենք հասարակութեան ծանօթանալու ենք հրաւիրում նրա էական կէտերի հետ՝ խնդրելով ստուգացնել մեր շարքերը յանուն կրթութեան փրկարար ջահին։

Շուտով, ծրագիրը հրատարակվելով կը գումարվեն ընդհանուր ժողովներ՝ վարչութիւններ ընտրելու, տեղական մարմիններ կազմակերպելու և լայն գործունէութիւն սկսելու. իսկ մինչ այդ տեղական յանձնախմբերը կը հաւաքեն ապագայ անդամների անունները տեղական ընդհանուր ժողովին հրաւիրելու համար։

Խնդրում ենք զանազան քաղաքներ գրանվող պարսկահայ համակրողներին չը խնայել իրանց աջակցութիւնը տեղական ժամանակաւոր յանձնախմբերին, որոնք շուտով կը ցրեն ընկերութեան ծրագիրը և կը կազմակերպեն տեղական մասնաճիւղեր։

Ծանօթ.—Զանազան քաղաքների ժամանակաւոր յանձնախմբերի հասցէներն առայժմ կարելի է ստանալ Թաւրիզի մասնաճիւղից։

—

Պարսկահայ Կրթական Ընկերութեան նախագծից

«Պարսկահայ Կրթական Ընկերութեան» նպատակն է օգնել պարսկահայ չքաւոր ուսանող ուսանողուհիներին (խօսքիս ամենայայն իմաստով մանկապարտէզից սկսած մինչև համալսարանական կրթութիւնը) ամեն տեղ և ամեն կերպ։

Դնելով իրան զուտ կրթական նպատակ ընկերութիւնը հեռու է կուսակցական խըտրութիւնից կամ որևէ քաղաքական կուսակցութիւնից կախում ունենալուց։

ՀԱՅԵՐՈՑԹ ԵՐԼԴԶԻ ՊԱԼԱՏԱՆ ՄԷՋ Ի ՊԱՏԻՒ ՕՍՄ. ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒՆ

—

Երէկ գիշեր սուլթանը պալատան մէջ ճոխ հացկերոյթ մը տուաւ ի պատիւ օսմ. երեսփոխանների։ Ժամը տասնըմէկին վերջացած էր երեսփ. ժողովը, և քառորդ մը յետոյ Ա. ատենապետ Ահմէդ-Բիզա բէյ և միւս ատենապետները ու ատենադպիրները պալատան կողմէ ղրկուած կառքերը բազմեցան. իսկ մնացեալ երեսփոխանները վարձու կառքեր նստան երկուքական հոգի։ Գնդապետ մը և կայս. թիկնապահ մը հիւրամեծաբ կարգուած էին երեսփոխաններուն։ Ժամը ճիշտ 12-ին Երլդզ հասան երեսփոխանները և գումարտակի մը կողմէ ողջունուեցան։ Բուն պալատան և Մէրասիմ Դարիբէսիի (ուր պիտի տրուէր հացկերոյթը) միջև գտնուած վայրը զօրքեր կեցած՝ գինուորական պատիւներ կընծայէին երեսփոխաններուն։ Սուլթանը. Մէրասիմ Դարիբէսիին վերի յարկի պատուհանէն կը դիտէր երեսփոխաններուն ժամանումը, որոնք պալատան առջև դիմաւորուեցան արարողական պաշտօնեաներուն կողմէ։ Մէրասիմ Դարիբէսիի վարի յարկի սենեակներուն մէջ պատուասիրութիւններ եղան երեսփոխաններուն, որոնք մինչև ժամը մէկ խօսուրբտուքով ատեն անցուցին։ Յետոյ արարողապետ Գալիբ-փաշա երեսփոխանները հրամցուց վերի յարկը, ուր հացկերոյթի սալօնը շքեղօրէն զարդուած էր։ Մասնաւոր տեղեր որոշուած էին սուլթանին, մեծ-եպարքոսին, ներքին գործոց մինիստրին, երեսփ. ժողովի ատենապետին և իր փոխանորդներուն, ճիւղերու նախագահներուն, քարտուղարներուն ու պալատական պաշտօնատարներուն համար։ Միւս երեսփոխանները ուղած տեղերնին նստան։

Սուլթանը, ուրախ զուարթ և շէնշող ու ձեռք բերած յաջողութենէն գոհ, ժպիտներ սփռելով իր շուրջը, սալօնէն ներս մտաւ և ազգին ներկայացուցիչները բարևեց մեծարանքով և ազգի մը հօրը շարժուձևով։ Սուլթանը հանդիսական համազգեստը հագած էր։ Սեղան նստելէ առաջ Համիդիէ մասը նուագուեցաւ։ Երեսփոխանները յոտընկայս ունկնդրեցին և ծափահարեցին, «Փատիշահըմ չօք եաշա» գոչելով երկիցս։ Յետոյ սեղան նստան։ Սուլթանին աջ կողմը բազմած էին մեծ-եպարքոսը, ներքին գործոց մինիստրը, Բ. ատենապետ Արիսթիդի փաշա, Ա. սենեկապետ Նուրի փաշա, Ա. արարողապետ Գալիբ փաշա, երեսփ. ժողովի ճիւղերու նախագահները և ժողովին քարտուղարները, իսկ ձախ կողմը՝ Ահմէդ Բիզա բէյ, Թալաթ բէյ, Մանիասիզադէ Բէֆիկ-բէյ, պալատան Ա. քարտուղար Զէվատ-բէյ, Հաջի Մահիր էֆ., Հօջա Ասըմ էֆ., երեսփ. ժողովի ատենադպիր Միւֆիտ-բէյ, Նիսիմ Մազլիահ էֆ., ժողովին վարչական պաշտօնեաները, Միդհաթ բէյ, Պանչէդօրոֆ էֆ. և երեսփոխաններ։

Ճաշի միջոցին ազատութեան, հայրենիքի և երեսփոխաններու նուիրուած ժառները նուագուեցան։ Սակայն կոչնականները ոտքի չելան։ Սուլթանը շարունակ կը տեսակցէր Բիզա և Թալաթ բէյերուն հետ ու յանկուցիչ մեծարանքներ կընէր անոնց։ Սուլթանին դէմքին վրայ ուրախութիւնը և զուարթութիւնը կը փայլէր ու փաղաքշական նայուածքներ կուղղէր երեսփոխաններուն։

Իբր յիշատակ կայս. այս հացկերոյթին, սուլթանը հրամայեց բոլոր ներկաներուն լուսանկարը քաշել։ Իսկոյն էլեկտրական լամպարները մարեցին և սրահը խոր մթութեան մէջ թաղուեցաւ. յետոյ լուսանկարը քաշուեցաւ մանեզիումի միջոցաւ։ Ճաշէն վերջը՝ անուշեղէններ հրամցուած ատեն սուլթանը Ա. քարտուղարին յանձնեց իր կայս. ճառը, հրամայելով որ Զէվատ-բէյ կարդայ զայն։ Ահաւասիկ այդ ճառը.

«Երեսփոխան էֆէնդիներ,

«Բարձրեալն Աստուած աւելցնէ թիւն ու երջանութիւնը։ Ամբողջ օսմ. ազգին և կայս. հպատակներուն ներկայացուցիչներուն հետ, այսինքն բովանդակ ազգիս հետ միասին ճաշելուս համար իրապէս և անկեղծօրէն գոհ մնացի։ Այս գիշերուան սա վիճակը կարծեմ օսմ. տէրութեան պատմութեան մէջ առաջին անգամ տեսնուած բարեբաստիկ իրողութիւն մըն է։ Կը շնորհաւորեմ։ Աստուած մեզ ուրախացնէ բազմաթիւ օրինակներու կրկնումով։ Այս երջանիկ հաւաքումին մէջ մեր սահմանադրութեան կողմէ մեր տէրութեան, ազգին և հայրենիքին ընծայուած և, շնորհիւ բարձրեալին, ապագային ընծայուելիք զարգացմանց այս սկզբնաւորութիւնը և ապացոյցը մեծարանքի արժանի բան մըն է։

«Երեսփոխան էֆէնդիներ, սա պէտք է գիտնաք թէ պետութեան և երկրին իրաւունքներուն պահպանն է Աստուած, յետոյ ազգն է և ազգին երեսփ. ժողովն է։ Հետևաբար՝ ձեր պարտականութիւնը թէ կարևոր է, թէ նուիրական։ Ձեր ջանքն ու ճիգը, ձեր դիտումն ու նպատակը պէտք է վճռականապէս համապատասխան ըլլան այդ կարևորութեան և նուիրականութեան։ Այս նուիրական իրաւունքները երաշխաւորող մեր սահմանադրութեան տրամադրութեանց պաշտպան կը կանգնիմ Աստուծոյ օգնութեամբ, անոր հակառակողը ով որ ալ ըլլայ, անոր ամենէն առաջին թշնամին և ոսոխը, կապահովցնեմ թէ, ես պիտի ըլլամ, իբր ձեր խալիֆան և վեհապետը։ Բարձրեալն Աստուած աջակից ըլլայ մեր ջանքերուն զորս կը կատարենք մեր ազգութեան, ազգին և նուիրական հայրենիքին երջանկութեան ու փրկութեան համար»։

Այս ճառը կարդացուած միջոցին քանիցս ծափահարութիւններ եղան երեսփոխաններուն կողմէ, որոնք շատ երախտապարտ և ուրախ կը թուէին, բարեմաղթութիւններ ընելով սուլթանին համար։ Երեսփոխանները «Փաղիշահըմ չօք եաշա» գոչեցին երիցս։

Երեսփ. ժողովին նախագահ Ահմէդ Բիզա բէյ շնորհակալութիւն յայտնելէ յետոյ ըսաւ.

«Վեհապետնիս,

«Իսլամական քաղաքակրթութիւնը ամբողջ աշխարհի երբ զարգացում կը պարգևէր, ահա այդ միջոցին խալիֆէները կը դիջանէին այնպիսի ժողովրդեան մը ներկայացուցիչներուն հետ գտնուիլ։ Անկէ յետոյ ձեր կայս. վեհափառութիւնը միայն այդ յաջողութիւնը ունեցաւ»։

Ահմէդ Բիզա-բէյի ճառէն յետոյ երեսփոխանները ծափահարութիւններ և գարձեալ մաղթանքներ ըրին սուլթանին համար «Փաղիշահըմ չօք եաշա» գոչելով։

Հացկերոյթէն յետոյ՝ սուլթանը սրահ մը քաշուեցաւ և երեսփոխաններն ալ ուրիշ սենեակներ գացին, սիգար ծխելու և սուրճ խմելու համար։ Յետոյ ճաշասրահի սեղանը վերածուեցաւ ընդունելութեան սրահի, ուր նորէն գացին երեսփոխանները։ Այս միջոցին սուլթանը ներս մտաւ և Ահմէդ Բիզա-բէյ՝ երեսփոխանները ներկայացուց իրենց անուններով։ Սուլթանը իւրաքանչիւրին սեծարանքի խօսքեր ուղղեց։ Ներկայացումը սապէս կը կատարուէր. «Այս ինչ ծառայիդ»։ Սուլթանը կը պատասխաներ. «Բա՛ւ լիցի»։ Երեսփոխաններէ ոմանք փափագ յայտնեցին սուլթանին ձեռքը համբուրելու. առաջին անգամ Կաստէմունիի երեսփոխան Իսմայիլ Մահիր էֆ. պագաւ սուլթանին ձեռքն, ըսելով. «Փառք կը հաճարիմ հինգ հարիւր միլիոն իսլամներու վեհափառ խալիֆէին ձեռքը համբուրելու»։ Յետոյ միւս երեսփոխանները համբուրեցին կարգաւ։ Սուլթանը անբեւեկայելի ուրախութեամբ մը տոգորուած՝ սա խօսքն ըրաւ.

«Մինչև հիմա կեանքիս մէջ այս աստիճան գոհունակութիւն չեմ զգացած և այսպիսի քաղցր ճաշ մը ըրած չեմ»։

Երեսփոխաններէն ոմանք փափագ յայտնեցին նորէն համբուրելու սուլթանին ձեռքը, բայց ուրիշներ դիտել տուին. «Ամա՛ն, մեր վեհապետը անհանգիստ չընենք»։ Ընդունելութիւնը վերջացաւ Կեսարիոյ երեսփոխանին մէկ բարեմաղթական ճառով, և մաղթանքներ եղան սուլթանին համար։ Ընդունելութենէն յետոյ սուլթանը սալոն մը քաշուեցաւ և քիչ յետոյ ընդունեց Ահմէդ Բիզա բէյը, Թալաթ բէյը և Արիսթիդի փաշան։ Ներկայ էին նաև մեծ-եպարքոսը, առաջին արարողապետը։ Սրահին մէջ գտնուող երեսփոխաններուն լուսանկարը առնուեցաւ։ Հօրանի (Սուրիա) երեսփոխանը դարձեալ ներկայացաւ սուլթանին և ձեռքը համբուրեց, յայտնելով թէ Հօրանի բնակիչները կայս. շնորհներու կը կարօտին և երախտապարտ են։ Սուլթանը հրամայեց Հօրանի ժողովրդեան հաղորդել իր կայս. բարևները։

Երեսփոխանները կրկին շնորհակալութիւն յայտնելով իրենց եղած մեծարանքներուն համար՝ պալատէն մեկնեցան։

(«Արևելք»)

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

2 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մի օրում խօլերայով հիւանդացան 28, մեռան 7 հոգի։

«Գրանդ-Օտէլ հիւրանոցում անձնասպանութիւն գործեց պարսից պրինց Շաֆիխանը։

ՐՕՍՏՕՎ Դ./վ.։ Դոն-Կուբան-Թերեքի գիւղատնտեսական հասարակութիւնը որոշեց միջնորդել, որ Թոյլատրվի Ռօստովում հաստատել համալսաւնական գիւղատնտեսական ցուցահանդէս։

ԼՈՒԴՈՒՆԿ։ Սուխումի գիւղացիները յարձակվեցին զէմտավային պետ Բէկէսկուլի վրա, որ յետ մղեց յարձակումը։ Յարձակողները ձերբակալվեցին։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ եկաւ ճանապարհորդ Սվէնդէսէնը և մեկնեց Աբո։ Աբոյից նա կը մեկնէ Ստոկհոլմ։

ԼԷՅՊՅԻԳ։ Պետական դատարանը Պետերսոն վարժուհուն, որ մեղադրվում էր պետական դաւաճանութեան մէջ, դատապարտեց չորս տարով ուղղիչ բանտում զրկելով հինգ տարով քաղաքացիական պատից։

ԲԵՐԼԻՆ։ Վախճանվեց բանաստեղծ Էրնէստ Ֆոն-Վիլդէն-Բրուխը։

Կայսրը իտալական թագուհուն շնորհեց Լուիզիայի շքանշանը։

Ամբողջ մամուլը ժանրաման նեկրոլոգներ է նուիրում ծովապետ Բօժդէստվենսկուն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երկու հարիւր հազար ռուբլին տարաւ սէրիա 2247, համար 48, եօթանասուն և հինգ հազար ռուբլին—2174|11, քառասուն հազար ռուբլին—10612|5, քսանհինգ հազար ռուբլին—13235|21, տաս հազարական ռուբլի—19592|38, 2083|40, 14106|32, ութ հազարական ռուբլի 6394|43, 13296|16, 7804|19, 12675|43, 18964|12, հինգ հազարական ռուբլի—14826|6, 12452|50, 2060|27, 1163|17, 8129|12 8959|46, 16208|47, 15587|50. մի հազարական ռուբլի—14357|45, 8607|32, 9744|1, 15853|6, 1073[illegible]|25, 17420|48 7300|47, 16299|8, 665|13, 7184|36, 1826[illegible]|43, 663|18, 17666|48, 6095|45, 11812|39, 19534|25, 317|36, 3374|21, 15895|33։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ. ՉՄՇԿԵԱՆԻ
1909 թ. ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐԸ

ինչպէս և «Армянскій Календарь съ предсказаніями» վաճառվում են Կովկասի քաղաքների յայտնի գրավաճառների և թղթեղէնների խանութներում։ Մեծ քանակութեամբ գնողները դիմում են հետևեալ հասցեով՝ Թիֆլիս, Մակար Չմշկեան։

(2. ե.) 7, 8—2

Ռեւեսրի եւ արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պրօսպ. № 24/4.

Տալիս է երկսեռ անձերին մանագիտական առևտր. կրթութիւն։ Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ զբաղմունքները կատարվում են կուրսերում Լօնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comtoir-ում։ Նիւթերն առընվում են ըէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական. 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն, (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ) ոչ պարտադիր. 1) ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, 2) սպագրութիւն, 3) գակտիլոգրաֆիա (ռեմինգտոն և ուր.) և 4 առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքներ կատարվում են և զատ-զատ։ 5 տեղ կայ։ Խնդիրների ընդունելութիւնը 10—12 և 4—5½ ժ.։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
(օ. մ.) Տ. ՓԻԼՈՅԵԱՆ

CONSTIPATION
PILULES DE CASCARA MIDY

ԴԵՂԱՀԱՏՆԵՐ
Cascara Midy
Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ դէմ

Ընդունելութեան չափը. 2 դեղահատ երեկոները, պառկելուց առաջ.
Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հեւոց և փորլուծութիւն։
Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré, Парижъ. Ռուսաստանի զանխաւոր դեղավաճառանոցներում։

(5, 15,25) (320257) 0—10

ԲԺԻՇԿ
ՄԻՔԱՅԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ
մասնագէտ միզասեռային, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների
Վերադարձաւ
և առաջվան պէս ընդունում է հիւանդներին ցերեկվայ 1—4 ժամը և երեկոյեան 6—8 ժամը։
Միխայլովսկի պրոսպեկտ, № 38.
(Ռէալական դպրոցի հանդէպ), տելեֆոն 663.
(օ. մ.) 11. 10—1

Հայ վարժուհու մօտ ընդունում են էժան գնով գիշերօթիկ փոքր հասակի աշակերտ կամ աշակերտուհի։ Նոյն տեղը տրվում է մի փոքրիկ սենեակ քրէհով աշակերտների համար։ Արմանսկի Բազարի տուփիկ № 6.
(ե. ու.) 10. 2—1

Լոյս տեսաւ
«ԱՂԲԻՒՐ»-ի դեկտեմբերի համարը
հետևեալ բովանդակութեամբ.
Աղբիւրի ալբոմ՝ Աստուածային ընտանիք, Հաշեկէշու, Մուկն ու կատուն—Յ. Աղաբաբ, Աղբիւրին—Կ. Կ. Մելիք-Շահնազարեան, Աղբիւրը—Սէյրի, Աղբիւրի 25-ամեակի առիթով—Սաթենիկ Զաքարեանց, Կաթն-Աղբիւր — Որմնադիր Սնացական Թամբազեանց, *** (Օրը մթնեց), Յ. Յովհաննիսեան, Աղբիւրը—Յար. Պետրոսեան, Աղբիւր և պարտիզպան—Բժշկապետ Բաղ. Նաւասարդեան, Աղբիւր—Պետրոս Մոռռեան, Զաւակը—Ատրպետ, Գիւղի որբիկը—Շառել Արաբ, *** (Խաղաղ ծով)—Ոնոփրիոս Անոփեան, Ողջոյն Աղբիւրին—Լէօնիդ, Մոխրագոյնը—Մակսիմ Գօրկի, Թարգ. Տիրուհի Կոստանեանց, Քնած արքայադուստրը—(Ժուկովսկուց) Ար. Խնկոյեան, Ածխաթթուածին։ Ստուէր-հրէշ, Աղբիւրի 25-ամեակը, Յայտարարութիւններ։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Յ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է բերանի և ատամի հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է ոսկու, արծաթեայ, ֆարֆորի և այլ տեսակ պլօմբներ։ Արհեստական ատամներ ոսկու և կաուչուկի վրա։ Կաբինետին կից արհեստական ատամների լաբորատորիա։ Խորհուրդը ձրի։
Ընդունելութիւն { 9—2 ժ. առաւօտեան, 4—7 ժ. երեկոյեան
Шелковниковская ул., № 8, ոչ հեռու Արաս-Արագսկայա հրապարակից։
(շ. կ. չ.) 25—20

ԿԵՆՏՐՕՆԱԿ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ
վաճառվում են
հանգուցեալ վիպասան
ՄՈՒՐԱՑԱՆԻ
(Գր. Տէր-Յովհաննիսեանի) երկերի ժողովածուի մնացած սակաւաթիւ օրինակները. գ. 1 ր. 50 կ., վայելուչ կազմով 2 ր.։ Գրավարով գնողներին սովորական զեղչ է լինում։ Գրավաճառներին առանձին համաձայնութեամբ։ Օտար տեղերից դիմել. Въ Тифлисъ, Центральной Книжной торговлѣ.
(ե.) ապ. 10—10

«Մշակի» յայտարարութիւններից օգտվողներին առաջարկվում է պատուէրներ տուած ժամանակ յիշատակել լրագրի անունը և համարը։

Открыта подписка на 1909 г. на двухнедѣльный журналъ (4-й годъ изданія).
Съ прилож. 24 книгъ и 48 выпуск. Народный Университетъ и Исторія Революціи.

„ЯСНАЯ ПОЛЯНА“
Въ журналѣ печатаются издававшіеся заграницею журналы освободит. движенія.

„БЫЛОЕ“, „ИСКРА“ и „КОЛОКОЛЪ“ А. Герцена.
Помѣщаются произведенія Льва Николаевича Толстого и Народный Университетъ, въ которомъ примутъ участіе: К. И. Арабажинъ, проф. К. Жаковъ, проф. Перецъ, Д-ръ филос. Гр. Полонскій и др.

24 КНИГИ ПРИЛОЖ. СЛѢДУЮЩАГО СОДЕРЖАНІЯ:
4 КНИГИ полнаго собранія соч. ИММАНУИЛА КАНА, переводъ по тексту, изданія Дюрра въ Лейпцигѣ подъ редакціею профессора Карла Форлендера.
4 Кн. «Библіотека Знанія» сочиненій проф. Виндельбанда. Гефдинга, Риля и др., въ образц. перев. подъ ред. и вступ. статьями доктора фил. Г. Полонскаго и проф. К. Жакова.
1 Кн. Разсказъ о семи повѣшенныхъ. ЛЕОНИДА АНДРЕЕВА, съ портр. біогр, и вступит. статьею проф. К. Жакова.
4 книги «Художественныя сокровища всѣхъ странъ и народовъ» (картины съ объяснительнымъ текстомъ).
4 книги «КРУГЪ ЧТЕНІЯ»—мысли мудрыхъ людей, собранная Гр. Л. Н. Толстымъ.
4 книги Сборникъ сочиненій бывшихъ до сихъ поръ подъ запретомъ въ Россіи.
3 книги ИСТОРІИ РОССІИ.

Подписная цѣна на годъ съ пересылкою 7 р. Допускается разсрочка: при подпискѣ 3 р. и къ Пасхѣ и въ іюнѣ 1909 г. по 2 р. Вышли 3 №№ съ тремя выпусками Народнаго Университета и Исторіи революціи. Остальные—1 и 15 числа каждаго мѣсяца: требованія адресовать: С.-Петербургъ, Лѣсной Корпусъ, Книгоиздательство «Ясная Поляна». Тамъ же принимается подписка на новое изданіе 16 частей полнаго
соб. соч. граф. Л. Н. ТОЛСТОГО
до сихъ поръ печатавш. за границей. Цѣна съ пересылкою 8 р. Допускается разсрочка: при подпискѣ 4 р. и къ Пасхѣ 1909 г. 4 р. Желающіе болѣе ширвкой разсрочки платятъ за каждыя 2 части по 1 р. (наложен. платъ. 20 к.). Вышло 12 частей. Уплачивающіе единовременно 8 р. получатъ всѣ 16 частей въ 4 англ. коленкора переплетахъ съ тисненіемъ золотомъ (по 4 части въ каждомъ).
(14, 25, 6) 182150. 3—3

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշուապահութիւն և ուրիշ մասնագ. առարկ.

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։

Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքներն սկսվելու են 1909 թ. յունվ. 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատտեստատներ։

Դրանից անկախ՝ բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր առևտրի և թւաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր։

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները դիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։
(կ. և. հ.) 15—11

„ՊՐՕՎՕԴՆԻԿ“
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՐԻԳԱՅՈՒՄ
ФАБРИЧ. ЗАВОДЪ ПРОВОДНИКЪ РИГА
1888
Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստ Թիֆլիսում
Սօլոլակայա փող., № 4.
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ՝
ԼԻՆՕԼԷՈՒՄ մեծ քանակով, միագոյն և նկարներով.
ԱՍԲԷՍՏԻ ԿԱՐՏՕՆ.
ԱՍԲԷՍՏԻ և ՏԱԼԿԻ ՆԱԽՇԵՐ.
ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
«ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ» ԼԻՆՕԼԵՈՒՄ միջանցուկ նկարներով, որոնք չեն ձևափոխվում մինչև լինոլէումի վերջնական մաշվելը։
ԼԻՆԿՐՈՒՍՏԱ (յաւիտենական պատատներ) բելիէֆ նկարներով՝ զարմանալի իրանց շքեղութեամբ և մեծ խնայողութեամբ։
ՀԱՏԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ աշխարհի ամենայաւ
կրկնակօշիկների ՊՐՕՎՕԴՆԻԿ
(№ 1) 25—7

Электропечатня Н. Г. Аганяньцъ Полицейская. 7.